

ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ԱՐՄԱՎԻՐԻ  
ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ



РЕСПУБЛИКА  
АРМЕНИЯ  
МАРЗПЕТАРАН  
АРМАВИРА

0901 Բ. ԱՐՄԱՎԻՐ  
ԱԲՈՎՅԱՆ-71  
Հեռ.՝ 0237/2-37-16  
Ֆաքս 010/28-06-46

0901. Г. АРМАВИР  
УЛ. АБОВЯН - 71  
Тел. 0237/ 2 – 37 – 16  
Факс. 010/ 28-06-46

<< 11 >> 02. 2016թ. թիվ 01/04.1/4244-16

**ՀՀ Արարալի մարզ,  
գ. Սայաթ-Նովա, Թումանյան 11 փուն,  
Ամրամ Վարդանի Մակինյանին**

ՀՀ Արմավիրի մարզպետին հասցեագրած Ձեր հարցման կապակցությամբ հայտնվում է, որ համաձայն «Տեղեկատվության ազատության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 3-րդ հոդվածի՝ տեղեկատվություն տնօրինողներ են համարվում տեղեկություններ ունեցող պետական և տեղական ինքնակառավարման մարմինները, պետական հիմնարկները, բյուջեներից ֆինանսավորվող կազմակերպությունները, ինչպես նաև հանրային նշանակության կազմակերպությունները և դրանց պաշտոնատար անձինք:

Նույն օրենքի 6-րդ հոդվածի առաջին մասի համաձայն՝ «Յուրաքանչյուր անձ իրավունք ունի ծանոթանալու իր փնտրած տեղեկությանը և (կամ) դա ստանալու նպատակով օրենքով սահմանված կարգով հարցմամբ դիմելու տեղեկատվություն տնօրինողին և ստանալու այդ տեղեկությունը», իսկ 9-րդ հոդվածի տասներորդ մասով սահմանված է, որ «Եթե տեղեկատվություն տնօրինողը չունի փնտրվող տեղեկությունը, կամ դրա տրամադրումն իր լիազորությունների շրջանակից դուրս է, ապա նա տվյալ գրավոր հարցումն ստանալուց հետո՝ 5-օրյա ժամկետում, պարտավոր է այդ մասին գրավոր տեղեկացնել դիմողին, իսկ հնարավորության դեպքում նրան տրամադրել նաև այդ տեղեկատվությունը տնօրինողի (այդ թվում՝ արխիվի) գտնվելու վայրը, որն ունի փնտրվող տեղեկությունը»:

Ձեր կողմից կատարված հարցման բովանդակությունից ելնելով հայտնվում է, որ Դուք Ձեր կողմից հարցված տեղեկատվությունը ստանալու ակնկալիքով կարող եք դիմել մարզի համապատասխան համայնքների ղեկավարներին: Արմավիրի մարզի համայնքների ցանկը սահմանված է «Վարչատարածքային բաժանման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով:

ՄԱՐԶՊԵՏ՝

Կապ.՝ Կ.Դանիելյան  
Հեռ.՝ /0237/ 2- 13-77

Ա. ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆ